01/10.1/2911-09
2009-05-07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Օրենքի նախագծի 1-ին հոդվածում՝

1) նշված օրենքի «Ն-062-1» համարն անհրաժեշտ է փոխարինել «ՀՕ-18» համարով.

2) «բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ.» բառով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջները.

3) փոփոխվող հոդվածը շարադրել նոր տողից, իսկ հոդվածի տեքստը սկզբից լրացնել «Հոդված 6.» բառերով, որից հետո շարադրել հոդվածի վերնագիրը, այնուհետև՝ տեքստը.

4) անհրաժեշտ է հանել «թաղային համայնքների» բառերը, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 11.1-ին հոդվածով և «Երևան քաղաքում տեղա-

կան ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով թաղային համայնքներ նախատեսված չեն.

5) «վերանվանումները կատարվում են» բառերը փոխարինել «վերանվանումները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ» բառերով, իսկ վերջին մասում «ներկայացմամբ» բառը փոխարինել «առաջարկությամբ» բառով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 82-րդ հոդվածի պահանջները։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Երվանդ Զախարյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-577-24.03.2009-ՏՏ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 7-ի Ն-062-I օրենքի /այսուհետ՝ օրենք/ 6-րդ հոդվածը շարադրել հետեւյալ բովանդակությամբ «Հայաստանի Հանրապետության մարզային բաժանման, մարզերի վարչական կենտրոնների, համայնքների, թաղային համայնքների փոփոխումը, նոր համայնքների ստեղծումը կամ նոր բնակավայրերի հիմնումը, բնակավայրերի դասակարգման փոփոխումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամաբ՝ սույն օրենքի մեջ համապատասխան փոփոխություններ եւ լրացումներ կատարելու միջոցով։ Մարզերի, բնակավայրերի, թաղամասերի, համայնքների եւ թաղային համայնքների անվանումներն ու վերանվանումները կատարվում են սույն օրենքի մեջ համապատասխան փոփոխություններ եւ լրացումներ կատարելու միջոցով։ Բնակավայրերի վերանվանումները կատարվում են միայն պատմական անվանումները վերականգնելու, օտար, ոչ բարեհունչ եւ /կամ/ կրկնվող անվանումները վերացնելու նպատակով։ Բնակավայրերի վերանվանումներ կատարելիս համապատասխան բնակավայրի բնակչության կարծիքը հաշվի առնելու նպատակով կարող է անցկացվել տեղական հանրաքվե։

Մարզերի եւ համայնքների սահմանների նկարագրությունը եւ սահմանների նկարագրության փոփոխությունները կառավարության ներկայացմամբ սահմանվում են օրենքով»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասնորորդ օրվանից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԾԻ

Սույն օրենքի ընդունումը պայմանավորված է Սահմանադրության 75եւ82 հոդվածների դրույթները լիարժեք եւ ներդաշնակորեն կիրառելու անհրաժեշտությամբ։